



Ե. Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԾՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Մարտակերտի շրջանը հայտնի է իր խրատաշունչ բնության գեղեցկությամբ, վիսպական լեռներով ու անտառապատ ձորերով, Թարթառով ու խաչենագետով, հայ շինականի շինարար ոգին ու նրա անցած ճանապարհի դժվարությունները խորհրդանշող հարյուրավոր կանգուն ու կիսավեր պատմա-ճարտարապետական կոթողներով:

Պատմական վավերագրերը և սերնդեսերունդ փոխանցվող ավանդությունները հիացմունքով են խոսում Մարտակերտի ազատատենչ կտրիճների անօրինակ քաջագործությունների մասին: Սելջուկ-թուրքերի տիրապետության վերացումից անմիջապես հետո կառուցվեց (1204 թ.) լեռնաստանի ճարտարապետական հրաշագեղ կոթողներից մեկը՝ Խաթրավանքը, ապա Խութավանքի կամ Դադի վանքի կաթողիկեն (1214): Թաթար-մոնղոլների առաջին արշավանքներն ու նրանց մոռյլ տիրակալության հաստատումը համընկան արցախական աշխարհի ամենափառահեղ հուշարձանի՝ Գանձասարի շինարարության ավարտմանը (1238):

Հետագա դարերը ևս անպտուղ չեն եղել: Նրանց թողած անձման հիշատակներն են Երից Մանկունքը և մեծ ու փոքր տասնյակ հուշարձաններ, խաչքարեր ու տապանական կոթողներ, որոնք այսօր էլ դիտողին հիացմունք են պատճառում:

ԽԱՉԵՆԻ ՀՈՎՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Բնության զարմանահրաշ գույների այս հովտում այնքան շատ են եկեղեցիները,

վանքերը, ավերակ բնակավայրերը, կամուրջները, բերդերը, աղբյուրները, ջրաղացները, խաչքարերը, գերեզմանատները և հին դամբանաբլուրները, որ կարելի է կազմել պատմական հուշարձանների մի երկար ցուցակ: Եթե դրան էլ ավելացնենք այստեղի վիմական արձանագրության այն հարուստ նյութերը, որ ահա երեք հարյուրամյակ է, ինչ գրավում է հետազոտողների ուշադրությունը, ապա ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ Խաչենի ձորակը հնագիտական, պատմական ու ճարտարապետական մի թանգարան է: Իրոք, դժվար է պատկերացնել Խաչենի հովիտն առանց այս անհամար հուշարձանների, որոնք լրացնում ու առավել հարստացնում են նրա անկրկնելի ու գունագեղ պատկերը:

Խաչենի վիմական արձանագրությունների առաջին հավաքողը եղել է Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, որի վիմագրական տետրակը կազմվել էր 1718 թ. և ընդգրկում էր Խաչենի հովտի շուրջ հարյուր վիմագրեր: Խաչենի արձանագրությունների հավաքման ու մասամբ ուսումնասիրման և հրատարակման հաջորդ շրջանը կապված է Սարգիս Եպիսկոպոս Ջալալյանի անվան հետ: Նրա կողմից հրատարակված վիմագրությունները, հնագիտական և այլ բնույթի հսկայական նյութը միշտ ծառայել է որպես կարևոր աղբյուր՝ հայագիտության տարբեր հարցերի ուսումնասիրման համար:

Խաչենի արձանագրությունները, ինչպես և այլ հուշարձանները գրավել են Մայր Աթոռի միաբան Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանի ուշադրությունը: Նրա հեղի-

նակությամբ հրատարակված «Արցախ» գիրքը պարունակում է վիմագրական, հնագիտական ու ազգագրական հսկայական նյութ, որը հեղինակի կողմից հավաքվել էր պատմական Արցախից և Ուտիքից: Տարբեր ժամանակներում դարձյալ Էջմիածնի միաբան խաչիկ վարդապետ Դադյանը հրատարակել է մի շարք արձանագրություններ, ինչպես նաև հնագիտական նյութեր և Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի ար-

թյունները մինչև այդ հավաքած վիմագրական ժողովածուներից ամենահարուստն է¹: Խոշորագույն արևելագետ Հովսեփ Արգարի Օրբելին դեռևս 1909 թվականի օգոստոսին, ակադեմիկոս Ն. Յա. Մառի հանձնարարությամբ, գործուղվում է Խաչեն: 17 օրվա ընթացքում երիտասարդ գիտնականը գրի է առնում շուրջ 270 արձանագրություն. 84-ը՝ Գանձասարի վանքից, 21-ը՝ Վաճառից, Խաչխութից ու Ծմակահող գյուղից,



Գանձասար. վանքի համալիրը (լուսանկարված 1911 թ.)

ծեքավոր հատվածները և Արցախի տարբեր հոգևոր կենտրոններից հայտնաբերած ձեռագրերից կատարված քաղվածքները: Եթե չհաշվենք Շուշիի ռեալական ուսումնարանի ուսուցիչ Էմիլ Ռյուսելի սիրողական փորձերը, ապա խաչիկ վարդապետ Դադյանը հանդիսանում է Խաչենի առաջին ուսումնասիրողը, որը պեղումներ կատարեց՝ հայտնաբերելով արժեքավոր նյութեր: Խաչիկ վարդապետ Դադյանի կողմից հրատարակված ու Հակոբա վանքի արձանագրու-

13-ը՝ Հավապտուկից, 26-ը՝ Կոշիկ անապատից, 37-ը՝ Մեծառանից ու Հակոբա վանքից, 11-ը՝ Զուխտ խաչ ու Խանչալ-խաչ սրբավայրերից, 35-ը՝ Խաթրավանքից, և 33-ը՝ Դադի վանքից²:

Արձանագրությունների այս հարուստ հա-

¹ «Բանասեր», Փարիզ, 1901, հ. 3-րդ, էջ 135—147:

² Բ. Ոլտաբաբյան, Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և Խաչենը (Փաստաթղթեր և տեղեկություններ), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1972 թ., № 1, էջ 198—199:

վարածուից Հ. Օրբելին Գանձասարի և Հավատուկի արձանագրություններն առանձնացրել ու հանձնել է տպագրության: ՍՍՀՄ ԳԱ-ի Արևելագիտական ինստիտուտի Լեհինգրադյան բաժանմունքի արխիվում է գտնվում 42 փոքրագիր էջից բաղկացած այդ գրքուկը՝ տպարանային սրբագրական արտատպվածքի (оттиск) ձևով:

Նույն արխիվում են պահվում նաև մյուս արձանագրությունները: Նրանք խնամքով, տառաձևերի, կցագրերի և վիմագրական այլևայլ առանձնահատկությունների պահպանմամբ արտագրված են փոքր չափի մի ընդհանուր տետրում՝ «Армянские надписи Хачена» վերնագրով:

Հ. Օրբելու ներդրումը Խաչենի պատմության ուսումնասիրության գործում անվիճելի է: Նրա հրատարակած երեք ծավալուն հոդվածները՝ հանդիսանում են Խաչենի պատմության ու մշակույթի հետազոտության հետաքրքիր փորձեր:

Հետագայում Խաչենի, նաև Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում գտնվող մյուս վիմագրերի ուսումնասիրությամբ զբաղվել են Սարգիս Բարխուդարյանը՝ 60-ական թվականներին, և Բագրատ Ուլուբաբյանը՝ 70-ական թվականներին: Ս. Բարխուդարյանի հավաքած արձանագրությունները հրատարակության է նախապատրաստված, իսկ Բ. Ուլուբաբյանն իր կողմից գրի առած հարյուրավոր արձանագրությունների մի մասը օգտագործել է թեկնածուական և դոկտորական դիսերտացիաներում՝ Արցախի, հատկապես Խաչենի պատմության հանգուցային և կենտրոն հարցերը պարզաբանելու համար:

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԸ

Խաչենագետի ձախ ափին, լեռնաշղթայի մի բազուկի վրա, կանգնած է հիմնավորց Գանձասարը՝ Արցախ-Ղարաբաղ աշխարհի հրաշալիքներից մեկը:

Այս վանքի տաճարի շինարարությունը սկսվել է 1216 և ավարտվել 1238 թվականին: Տաճարի արևմտյան կողմից կառուցված գավթի հիմնադրման տարե-

թիվն անհայտ է, սակայն այստեղ գտնվող արձանագրության համաձայն նրա շինարարությունն ավարտվել է 1266 թվականին⁴:

Վանքը կառուցող և նրա հովանավոր Հասան-Ջալալ Դոլան՝ Խաչենի հզոր և երախտավոր իշխանը, ոչինչ չի խնայել ճարտարապետական այս հրաշակերտի համար՝ ոչ միջոցներ, ոչ էլ ետանդ:

Ժամանակակից պատմիչները և հատկապես Կիրակոս Գանձակեցին հիացմունքով են պատմում վանքի շինարարության և նրա օծման արարողության մանրամասները:



Գանձասար. եկեղեցու հարավային ճակատը

Կ. Գանձակեցին գրում է, թե Հասան-Ջալալը «Ծինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով գմբեթարդ երկնամասն տաճար ի փառացն Աստուծոյ... Որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանաբերդոյ ի տեղի շիրմի, իրեանց և յոլով ամս աշխատ եղեն և նման»⁵: Պատմիչի վկայությամբ օծման հանդիսություններին ներկա գտնվողների մեջ կային միայն յոթ հարյուր քահանաներ:

Վանքի նավակատիքն ու օծումը տեղի են

⁴ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանության պատմությունը 10—16-րդ դդ. (դոկտորական դիսերտացիա), Երևան, 1973 թ., էջ 155:

⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 269—270:

³ И. А. Орбели, Нефритовая кинжальная рукоять с армянской надписью, «Известия императорской академии наук», П.-гр., 1909 г., VI серия, т. III, № 5, стр. 377—389, его же Хасан-Джалал, князь Хаченский, «Известия ИАН», П.-гр., 1909 г., VI серия, т. III, № 6, стр. 405—436, его же Бытовые рельефы на Хаченских крестных камнях XII—XIII вв., Избранные труды, Ереван, 1963, стр. 198—199.

ունեցել 1240 թվականին, վարդապետի մեծ տոնի օրը (հուլիսի 22-ին, կիրակի):

Գանձասարի կառուցման ականատես պատմիչի այն վկայությունը, որ վանքը կառուցվել է... «ի տեղի շիրմի իրեանց», հաստատվում է նաև արձանագրական ու մատենագրական ակտի հին տեղեկություններով: 9—10-րդ դարերին վերաբերող պատմական աղբյուրներից հայտնի է, որ Գանձասարի հինավուրց եկեղեցին եկեղեցական ու քաղաքական կենտրոն էր Արցախի և շրջակա հայկական գավառների համար:



Գանձասար. պարսպի հարավային մուտքը

Հայոց Ամանիա Մոկացի կաթողիկոսի (946—968) «Յաղագս ապտամբութեան տանն Աղուանից» գրության համաձայն 949 թվականին, քաղկեդոնական վեճեր հարթելու համար, Ամանիա կաթողիկոսը Խաչեն գավառում ժողով է գումարում՝ նշանակող իշխանների և հոգևորականների մասնակցությամբ: Պատգամավորների ցուցակի մեջ հիշատակված է նաև «Հայր Սարգիս Գանձասարոյ» վանականը⁶:

Նորակառույց Գանձասարին վիճակված էր քաղմապատկելու նախկին հոգևոր կենտրոնի փառքը՝ դառնալով ոչ միայն Խաչենի իշխանության մշակութային կյանքի խոշոր

⁶ Տե՛ս «Տեսուն Ամանիայի հայոց կաթողիկոսի յաղագս ապտամբութեան տանն Աղուանից», «Արաբատ», Էջմիածին, 1896, էջ 42:

կենտրոնը, այլև լինելու ամբողջ Հայոց արևելից կողմանց կաթողիկոսանիստը և միաժամանակ քաղաքական մեծ խմորումների, նախատագրական դեպքերի ու իրադարձությունների կազմակերպիչը:

Լեոն Գանձասարի նշանակությունը հսկայական է համարում ամբողջ Արևելյան Հայաստանի համար: «Իր գեղեցկությամբ այս կողմերում իր նմանը չունեցող այդ վանքը դարձավ լեոնաշխարհի մտավոր կենտրոնը, տեղական սրբություն և հոգևոր իշխանության կայան...»⁷:

Սկսած 1555 թվականից մինչև 1815 թ. այս վանքը համարվել է Աղվանից աշխարհի կաթողիկոսների նստավայրը⁸:

17-րդ դարի վերջերից Գանձասարը դարձավ հայ ազգային-ազատագրական շարժման կարևոր կենտրոններից մեկը: Գանձասարի Եսայի կաթողիկոսը՝ համոզված ուսանելու ու ազգային-ազատագրական պայքարին նվիրված մարտիկ, դարձավ այդ շարժման ղեկավարը: Նրա համագործակցությամբ Իսրայել Օրին առաջին քայլերն արեց Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու ուղղությամբ:

Տարբեր առիթներով և տարբեր ժամանակներում այստեղ՝ Գանձասարում էին հաճախակի անցկացվում համահայկական հավաքույթներ, ժողովներ, հանդիպումներ՝ ազատագրական շարժումը բորբոքելու, ուսական հզոր կայսրության հետ դիվանագիտական կապեր հաստատելու ուղղությամբ, Ռուսաստանին միանալու հարցի կառավարությամբ: 1701 թ. այստեղ գրվել է Ռուսաստանի կայսր Պետրոս Առաջինին ուղղված առաջին նամակը, որով դարաբաժնիները Ռուսաստանի օգնությունն են հայցել՝ հարևան բռնակալներից Հայաստանը ազատագրելու համար⁹:

* *

Գանձասարի ճարտարապետական համալիրը, հյուսված շրջապատի ջնհաղ բնության հետ, հայ ժողովրդի հազարամյա ռազմահարուստ ճարտարապետական ժառանգության ամենահուսկապ գանձեղից է: Հայ ճարտարապետության պատմության երախտավոր Ա. Լ. Յակոբսոնն այն համա-

⁷ Լեո, Հայոց պատմություն, 2-րդ հատոր, գիրք 2-րդ, Երևան, 1978 թ., էջ 14—15:

⁸ «Բնաշխարհիկ բառարան», էջ 464: Լուսինա Կ. Գոն (Գոնտորաճյան), Հայկական եկեղեցական ճարտարապետություն (ամգլերեն), Նյու-Յորք, 1974 թ., էջ 142:

⁹ Эзов, Сношения Петра Великого с Армянским народом, Санктпетербург, 1898, стр. 154.

րել է հայկական ազգային մշակույթի «բացառիկ երևույթ, հայ ճարտարապետության մարգարիտը»¹⁰:

Նրա կարծիքով Գանձասարը ոչ միայն իր մեջ ընդգրկում է և ընդհանրացնում հայ դասական ճարտարվեստի բազմադարյան նվաճումները, «... ոչ միայն ինքնատիպ է ու իր կատարելության մեջ ինքնուրույն, այլև բացառիկ է. մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այդպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»¹¹:

Փարիզի Սորբոնի համալսարանի բյուզանդական ճարտարապետության խոշոր մասնագետ, պրոֆ. Ծառուկ Դիլը համաշխարհային մշակույթի գանձարան մտած հայկական հինգ հուշարձաններից մեկն է համարել Գանձասարը¹²:

Գանձասարի վանքը հիմնականում բաղկացած է եկեղեցուց և գավթից, որոնք այնպիսի մի ամբողջականություն են կազմում, որ ասես դրանք առանձին շինություններ չեն և կառուցվել են միաժամանակ:

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ ունի ներքուստ խաչաձև, արտաքինից ուղղանկյուն գմբեթակիր հորինվածք (սրահի չափերը՝ 12,3×17,75), որի չորս անկյունները զբաղեցնում են կրկնաճախակ ավանդատները: Դեպի վերին ավանդատները տանում են կոնսոլ աստիճանները, որոնց ներքին մասում քանդակված են խոշոր ստալակտիտներ:

Եկեղեցու արտաքին և ներքին ճարտարապետական և դեկորատիվ հարուստ հարդարանքները միասնություն են կազմում՝ տաճարը դարձնելով հայկական արվեստի կատարյալ ստեղծագործություններից մեկը:

Կառույցի մեջտեղում վեր սլացող գմբեթի տակի տարածության անկյունները ընդգրծված են ուղղահայաց խորձերով, որոնք շրջանակում են տաճարի կենտրոնական մասը: Թմբուկի նեղ լուսամուտների վերևի մասերը (մեկական հյուսիսային, հարավային և արևմտյան կողմերում) մշակված են խոշոր մատներով:

Խաչի թևերի կամարները սրահի կողմերից ունեն եռաստիճան կողապատկեր և

սլաքաձև կոնտուր: Այդ կողապատկերներից վերևինը շրջանակում է կիսագլանաձև մոնումենտալ դեկորատիվ քիվը:

Գմբեթատակ առագաստների մեջ տեղադրված են գույգ փորագրված խոնջաներ (տախտակներ)՝ աստղ, շրջանակ, քառանկյունի և այլ զարդաքանդակներով՝ լրացված վերին աստիճանի նուրբ ու վարպետորեն փորագրված պարուրաձև ու արմավազարդ հյուսված քանդակներով: Նրանք ոչ



Գանձասար. գավթի արևմտյան մուտքի քանդակազարդերը

միայն չեն կրկնվում, այլև ավելի են ընդգրծում գեղանախշ սյուները, առագաստները: Յուրաքանչյուր առագաստի վերին մասում, անմիջապես գոտու տակ, տեղադրված են բարձրադիր պատկերաքանդակներ: Հարավ-արևմտյան առագաստի վրա գտնվող քանդակը խոյի գլուխ է, հարավ-արևելյան և հյուսիս-արևելյան առագաստների վրա՝ եզների գլուխներ, հյուսիս-արևմտյան առագաստի քանդակը մարդկային դեմքի է նրման: «Այս տիպի քանդակները, — գրել է Ա. Լ. Յակոբսոնը, — ըստ երևույթին տարած-

¹⁰ А. Л. Якобсон, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). «Исследования по истории культуры народов Востока» (Сборник в честь И. А. Орбели), М.-Л., 1960, стр. 151.

¹¹ А. Л. Якобсон, *Ազ. աշխ.*, էջ 151:

¹² Տե՛ս Թ. Թորմանյան, Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջը, նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Բ, Երևան, 1948, էջ 25:

ված են եղել 10-րդ դարում, հագրատունիների ժամանակ: Եվ նրանք հանդես են գալիս որպես սուրբ կենդանիներ, ծառայելով ինչպես շենքի հեճարաններ և իմաստավորում են որպես կառույցի պահպաններ»¹³:

Գանձասարի եկեղեցու թմբուկը ներսից կլոր է, մշակված ութ զույգ բարակ կիսապյուններով:

Արտակարգ հարուստ են բեմի ճակատային բարձրության զարդանախշերը: Այն բոլոր կողմերից երիզված է լայն ու խորը ելուստված գոտիով: Ծրջանակի ներսում կա ութ շեղանկյունի, որոնք, կենտրոնում լուսաստվեր ստեղծելու համար, թեթևակի խորացված են նրանց միջև եղած եռանկյունիներով: Այդ բոլոր շեղանկյունիները և եռանկյունիները լրացված են բարդ և խիտ հյուսածո զարդարանքներով:

Եկեղեցու արտաքին ծավալները պարզ ու հստակ կրկնում են շենքի ներքին կառուցվածքը: Խաչաթևերը առանձնանում են բարձր ճակտոններով, իսկ անկյունային մասերը ավելի ցածրադիր են: Ծակատները մշակված են ոչ խոր եռանկյունի որմնախորշերով: Դրանք թեթևացնում են շենքի զանգվածը, միաժամանակ լույս ու ստվերով առանձնանում են ճակատի հիմնական մասերը:

Ծեփը բարձրանում է հնգաստիճան պատվանդանի վրա:

Եկեղեցու ամեն մի պատ յուրովի է լուծված: Տաճարի հյուսիսային և հարավային ճակատները բաժանված են հնգական տափակ կամարներով, որոնց մանրամասները, հատկապես գեղազարդերը խստորեն համապատասխանում են ճարտարապետական կառուցվածքին: Հարավային և հյուսիսային կամարները գեղանախշ կիսապյուններով շրջանակում են որմնախորշերը: Կենտրոնական մեծ կամարի վրա խոյանում է մեծադիր խաչը: Հարավային պատի այս մույն կամարի տակ նեղ ու երկար լուսամուտ կա՝ եզերված նրբահյուս նախշերով, լուսամուտից վերև՝ արևի քանդակազարդ ժամացույցը: Հյուսիսային պատը եզերված է այլ քանդակներով, արևի ժամացույցի տեղը, խաչից վերև, հավերժության խորհրդանշանն է:

Արևելյան ճակատը մույնպես բաժանված է մույնատիպ կամարներով, սակայն նրանք կիսաշրջանաձև են: Կենտրոնական կամարը քիչ բարձրադիր է և ունի նեղ լուսամուտ:

Արևմտյան կողմում կառուցված գավիթը ծածկել է խաչելության քանդակի հորին-

վածքը: Այն բաղկացած է լայնաթև խաչից և Քրիստոսի խաչված պատկերից: Նրա երկու կողմերում ծնկաչոք ֆիգուրներ են:

Եկեղեցու հմայքն է կազմում նրա գմբեթի բազմանիստ թմբուկը, որի վրայի չկրկնվող բարձրաքանդակներն ու ժանցկամե նախշերը, կիսապյունների փնջերն ու հովհարաձև ծածկը գմբեթին տալիս են արտակարգ գրավչություն: Թմբուկը բաժանված է 16 նիստի, որոնց բարձրությունը ընդգծված է նաև զարդաքանդակների միջոցով:

Յուրաքանչյուր նիստի կողերը շեշտված են բարձրադիր կիսապյուններով, որոնք ավարտվում են քանդակազարդ խոյակներով: Նիստերից ութի վրա (մեկը նոսր) կա եռանկյունի որմնախորշ, որի խորքում պատված քանդակով կիսապյուն:

Մյուս նիստերը հարթ են, նրանցից 4-ը զբաղեցնում են նեղ լուսամուտները՝ լայն շրջանակակալներով, ծածկված բարդ ու շատ մուրք փորագրությամբ, իսկ շրջակալի վերևում կա վարդյակ: Մյուս չորս նիստերը ունեն փոքր, կլոր լուսամուտներ՝ մույնպես լայն և խորը պրոֆիլի շրջանակով: Դրանք բոլորն էլ պատած են ժանցկամե փորագրություններով: Նիստերից մեկը զուրկ է լուսամուտից, որին փոխարինում է ժանցկահյուս վարդյակի քանդակը:

Գմբեթի արևմտյան նիստերում տիրական են երկու կտիտորների քանդակները: Դիմապատկերով երկուսն էլ նման են իրար: Նրանք վեր բարձրացրած ձեռքերով բռնել են եկեղեցու մանրապատկերը (մակետը) տախտակի վրա: Հետազոտողների կարծիքով դրանք տաճարի կառուցման պատվիրատուներ Հասան-Ջալալ Դոլախի և նրա որդի Աթաբակի արձաններն են¹⁴: Մեկ այլ նիստի ճակտոնապատի տակ փորագրված ֆոնի վրա Քրիստոսի բարձրաքանդակն է, իսկ լուսամուտի շրջակալի վրա՝ Ադամի և Եվայի պատկերաքանդակները՝ համապատասխան գրություններով վկայված:

Հարավային երեք նիստերի որմնախորշերում քանդակված են ծնկաչոք հանդիպակաց ֆիգուրներ, գլուխներին՝ լուսապսակներ: Մի այլ տեղ ցույց գլուխ է, երրորդում՝ Աստվածամայրը մանկան հետ, չորրորդում պատկերված է արծվի գլուխ և այլն: Այստեղ ճարտարապետն աստղերից, ծաղիկներից և ժանցկազարդ շղթաներից հյուսել է նրբակերտ նախշեր:

Եկեղեցու գավիթն իր ճարտարապետական կոմպոզիցիայով ավելի է ամբողջացնում եկեղեցու մոնումենտալությունը: Հաղ-

¹³ А. Л. Якобсон, *Աշխ.*, էջ 146:

¹⁴ А. Л. Якобсон, *Աշխ.*, էջ 151: Բ. Ուլուբաբյան, *Աշխ.*, էջ 152:

պատի սուրբ Նշան եկեղեցու գավթի նման այն ներսից դահլիճ է (ներքին չափերն են՝ 11,62×11,80, 3,15×3,25 մետր), երկու զույգ խաչվող կամարներով և շրաքարային երդիկով: Գանձասարի վանքի գավթի Ս. Լ. Յակոբսոնի կարծիքով հայկական ճարտարապետական հանճարի ամենափայլուն դրսևորումներից է. «... Հորինվածքով խիզախ, կառուցվածքով իմաստուն և Հայաստանից դուրս ոչ մի տեղ չի կիրառված»¹⁵: Գավթի արևմտյան պատից շատ քիչ հեռավորության վրա, երկու անկյուններում, պատին կից, կանգնած են տասնվեցանիստ երկու որմնամույթեր, որոնց վրա հենվում են բարձրաթիչ կամարների ծալիները:

Գավթից դեպի եկեղեցի տանող մուտքը շրջանակված է կիսակլոր կամար ունեցող ճակատամուտքով, որի շրջանակակալը մշակված է մանր հյուսվածքով, իսկ քանդակագարը կամարը՝ աստղերով և շեղանկյունիներով:

Արևմտյան կամարաշիղերի ծալների միջև տեղադրված է լայն քանդակագարի խաչը: Մուտքի վերևի մասով ձգվող կամարաշիղի տակ գտնվող հարթությունը զարդարված է շախմատաձև վարդյակներով և շղթայանման հյուսվածքով:

Գավթի չափերը Հասան-Ջալալյան տոհմի դամբարանն է եղել: Այդ պատճառով էլ սյունները պատերի տակ մղելը եղել է կենսական պահանջ, որից և ծնվել է կամ որին համապատասխանել է ճարտարապետական նոր լուծումը: Այժմ այնտեղ գավթի արևելյան մասից սկսվող շարքով հանգչում են Հասան-Ջալալյան տոհմի նշանավոր մեծերը՝ Հասան Ջալալ Բարեպաշտից ու հոգևոր հայրապետներից մինչև Բաղդասար միսրոպոլիտը: Նրանց միակտոր ու հարթ շիրմաքարերը ևս արցախական աշխարհի քարգործ վարպետների արարիչ ձեռքերով դարձել են արվեստի հոյակապ նմուշներ:

Գավթին արտաքինից պարզ է, այն ավարտվում է բարձր երդիկով, որը կենտրոնում պսակված է ութանիստ թեթև գմբեթով:

Հյուսիսային ճակատի մուտքի վերին անկյուններում տեղադրված են երկու բարձրա-

քանդակ փուլագներ: Հարավային ճակատի հարավ-արևմտյան կողմում կա կլոր լուսամուտ՝ շրջանակված քառաթև զարդաքանդակով:

Գավթի հարդարանքի ամենակարևոր տարրը հանդիսանում է արևմտյան շքամուտքի երեսակալը: Այն որոշ չափով դուրս է եկել պատի հարթությունից և ամսիջապես աչքի է ընկնում: Պատի եռաստիճան պատվանդանից բարձրացող զանգվածային կիսագլանը շրջանցում է դուռը՝ կազմելով նրա բարձրաքանդակ երեսակալը: Վերջինիս կենտրոնական մակերեսը ընդհատվում է կլոր և իրար հաջորդող քառանկյունի նիստով՝ հարդարված հյուսածո զարդաքանդակով: Վերին աստիճանի նուրբ, բայց երբեք չկրկնվող այս համարյա ուկերչական աշխատանքն ավելի կատարյալ է դարձնում դռան մյուս երեսակալի (որը խոր մխրճված է պատի մեջ) փորագրությունները:

Վանքապատկան բնակելի, տնտեսական շենքերի, դարպասներով պարիսպների հետ միասին Գանձասարը հայ ճարտարապետության լավագույն համալիրներից է¹⁶:

Հյուսիսային պարսպին կից են վանքի 17-րդ դարում կառուցված թաղածածկ բնակելի խցերը և սեղանատունը՝ խոհանոցով: Իսկ արևելյան կողմում գտնվում են տնտեսական և 19-րդ դարում կառուցված դպրոցի երկհարկանի շենքերը:

Վանքի արձանագրությունների մեծ մասը գրված են վարպետ գրիչների ձեռքով, գրերի միատեսակ ոճով: Վանքի պատերին կա շուրջ երկու հարյուր արձանագրություն:

(Ծառունակելի)

¹⁵ Աղվանից Սարգիս կաթողիկոսի անվան հետ կապված է մի նրախոսացից գործ՝ Գանձասարի վանքի վերանորոգումը: Այդ առթիվ նա ինքն է թողել անթվակիր մի փոքրիկ արձանագրություն վանքի խուցերից մեկի պատին: Սակայն Գանձասարում գրված մի Ավետարանի հիշատակարանում (որը գտնվում է Մատենադարանում) նորոգման տարեթիվը նշված է 1551:

Հաջորդ խոշոր վերանորոգումը կատարվել է 1781 թվականին, Թալիշի Մելիք Հովսեփի որդի Աբով հարյուրապետի կողմից, իսկ վերջինը՝ 1907 թվականին, Արքայազն Բեն Հասան-Ջալալյանի միջոցով:

¹⁶ А. Л. Якобсон, Изв. азерб., т. 2, 154;